ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ռուսաց ազգին առթիվ :

Ռուսաստանի ժողովրդեան աճումը, և իրենց կենաց երկայնութեան չափը՝ կարգէ դուրս բան մըն է : 1853 տարուոյն 67,000,000 ժողովրդեան մէջ՝ 2,782,636 ծնունդ եղեր է . իսկ 1,650, 132 մահ, որոնցմէ 26,200 հոգի 50 տարուընէ վար մեռեր են, 2,181 հոգի ալ 90 տարին անցած, 130 հոգի 100 տարեկան, եօթը հոգի՝ 125-130 տարուան, իսկ ուրիշ մէկ մըն ալ 145 տարուան :

Հաւատալի բան մըն է Ռուսիոյ կանանց բազմածնութիւնն ալ : Ռոսկուայի օրագիր մը կը պատմէ որ 1755 տարուոյն մարտի 21ին Ռիրիլով անունով գեղացի մը ներկայացեր է Ռուսաց կայսրուհուոյն առջև իր կնկանը հետ մէկտեղ, որուն հետ կարգուեր է եղեր երկրորդ անգամ՝ 70 տարուան հասակին մէջ : Այս մարդս իր առջի կնկանէն 57 զաւակ ունեցեր է, չորս անգամ չորս չորս զաւակ մէկտեղ, եօթը անգամ ալ՝ իրեք իրեք, իսկ վեց անգամ ալ՝ երկուորեակ : Երկրորդ կնկանէն եօթը անգամ տղայ ունեցեր է . մէկ անգամ մը իրեք զաւակ մէկէն, ուրիշ վեց անգամ ալ երկերկու, և ընդ ամենը 15 զաւակ . և առջիններուն հետ մէկտեղ ունեցեր է 72 տղայ՝ բոլորն ալ ողջ :

Նոյնպէս ալ 1854 տարուոյն մարտի 1ին Կասթրովա անունով կնիկ մը հինգ զաւակ մէկտեղ բերեր է, երկուքը մանչ և իրեքը աղջիկ . բայց նոյն օրը հինգն ալ մեռեր են : Ուրիշ կնիկ մըն ալ չորս մանչ զաւակ մէկ անգամուն ծներ է, որոնցմէ մէկը միայն երկրորդ օրը մեռեր է, իսկ մէկալներնք ապրեր են : Էկ ուրիշ գեղացի մըն ալ 1854ին չորս զաւակ մէկէն ունեցեր է, որոնց ամենքն ալ ապրեր են : Նոյն տարին Նոյեմբերի մէջ ազնուական խաթուն մըն ալ չորս զաւակ մէկէն ծներ է : Բանկ դիպուածներ անպակաս են և կը լսուին միշտ Ռուսաց ազգին մէջ :

ՄԱՆՐԱՎԷՊ

Որդիական սէր :

Ամենօք Նաբոնի մէջ որբևարի կընիկ մը կար, որ իրեք տղայ ունէր : Սէր կայ իր տղոցը աշխատութիւնը կ'ապրէր . և թէպէտ աղքատօրէն կ'անցընէին կեանքերնին, սակայն վաստրկածնին չէր բաւեր իրենց ապրուստին : Այրը տղոցը վրայ կը գուրգուրար, տղաքն ալ իրենց մօրը վրայ . կը փափաքէին կը մտածէին ասոնք որ մայրերնին խալսցընեն կարօտութենէն. բայց ձեռքերնին չէր աւելի վաստրկիլը . որչափ որ սրտերնին այս հոգով կը մաշէր, այնչափ իրենց որդիական սէրը օր օրուան վրայ կ'աւելնար : Վերջապէս օր մը իրենց ծնողասիրութիւնը աւելի զօրաւոր կերպով խօսեցաւ սըրտերնուն մէջ . այս իրեքը ծածուկ խորհուրդ մը ըրին մէջերնին, ու կարգէ դուրս գործողութեան մը ձեռք զարկին : Միչ ժամանակ առաջ Նաբոնի մէջ օրէնք մը ելած էր թէ "Եվ որ տերութեան ձեռքը կը մատնէ գող մը, մեծ գումար մը ստակ վարձք ունի" : Ուստի ասոնք խօսքերնին իրարու հետ յարմարցուցին, որ մէջերնէն մէկը գող ձևացընեն, ու մէկալ երկուքը երթան ամբաստանեն զանիկայ գատաւորին . վիճակ ձգեցին, ու վիճակը պզտիկին վրայ ելաւ : Նոր ձեռուընեը ետևը կապեցին, ու իբրև յանցաւոր մը բռնեցին դատաւորին առջև հանեցին : Դատաւորը սկսաւ քննել զանիկայ . իսկ տղան համարձակ կերպով մը խոստովանեցաւ թէ "Գող եմ, ու սա նա գողութիւնը ըրեր եմ" : Ընդ մէկէն բանտ տարին զինքը . ու մէկալներնց ալ վարձքերնին տուին : Բայց ասոնք ստակը առածնուն պէս՝ սրտերնին սկսաւ կտրտիլ եղբօրնուն վրայ, և կը մտածէին թէ ինչ ծանր վըտանգի մէջ է . այս մտածութիւններէն